

ՊՈՒՇԿԻՆ

Կ Ի Ր Զ Ա Լ Ի

ԹԱՐԳՄ. Ս. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

891 41
Պ-97

ՊԵՏԶՐԱՑ

1986

ՅԵՐԵՎԱՆ

19 NOV 2010

89171
7-92

ար

ՊՈՒՇ ԿԻՆ

1010
40147

Հ
Ի
Օ
Ե

Կ Ի Ր Ջ Ա Լ Ի

ՔԱՐԳՄ. Ս. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ



Պ Ե Տ Հ Ր Ա Տ
Յ Ե Ր Ե Ղ Ա Ն
1 9 3 6

23 JUL 2013

13/22

13/22

Պատ. խմբ. Ս. ԶՈՐՅԱՆ
Սրբազորիչ՝ Ա. ԱՐՁԱՔԱՆՅԱՆ
Գլավելտի լիազոր Ս—2151
Հրատ. 3761
Պատվեր 403, տիրած 4000

Գյուղհրատի տպարան, Նալբանդյան 11

Կիրջալին¹⁾ ծագումով բուլղարացի էր։
Կիրջալի թուրքերեն նշանակում է քաջ, կտրիճ։
Նրա իսկական անունը յես չգիտեմ։
Կիրջալին իր ավագակալին հարձակումներով

¹⁾ Կիրջալի — (տաճկերեն բառացի նշանակում է «անապատային ավազակ») — իր ժամանակ մուղավացի մի նշանավոր ավազակ, վորը 1821 թվին մասնակցել է հուլյների ապստամբությանն ընդդեմ տաճիկների։ Ապստամբության չարաչար պարտութունից հետո նա փախչում է Բեսսարաբիա, ուր և 1823 թ. Քիշինև քաղաքում ձերբակալվելով հանձնվում է տաճիկների ձեռքը։ Պուշկինը այդ տարիներում (1820—1823) աքսորի մեջ լինելով հարավում՝ Կովկաս, Ղրիմ, Բեսսարաբիա (Քիշինև ք.), սաստիկ հետաքրքրվում է Կիրջալու անձնավորությամբ, դիտավորութուն ունենալով նրան մինչև իսկ 1828 թ. սկսած իր պոեմի հերոսը դարձնելի։

սարսափ եր տարածել ամբողջ Մոլդավիայում¹⁾։ Նրա մասին վորոշ գաղափար տալու համար կպատմեմ մեկը նրա սխրագործություններից։ Մի անգամ գիշերը նա և առնառուտ²⁾ Միխայլակին յերկուսով հարձակվում են բուլղարական մի գյուղի վրա։ Նրանք հրդեհում են այն յերկու կողմից և սկսում խրճիթից խրճիթ անցնել։ Կիրջալին մորթոտում է, իսկ Միխայլակին կրում ավարը։ Յերկուսն էլ գոռում են. «Կիրջալին, Կիրջալին»։ Գյուղացիք բոլորը դես ու դեն են փախչում։

Յերբ Ալեքսանդր Իպսիլանտին³⁾ խռովություն գցեց ժողովրդի մեջ և սկսեց գործ հավաքել, Կիրջալին նրա մոտ տարավ իր հին ընկերներից մի քանիսին։ Ետերիալի⁴⁾ իսկական նպատակը նրան լավ հայտնի չէր, սակայն պա-

1) Մոլդավիա յեվ Վալախիա — մերձ-դանուբյան իշխանություններ եյին վորոնցից հետագայում կազմվեց Ռումինիան։

2) Առնառուտ — տաճիկները այսպես եյին անվանում ալբանացիներին։

3) Ալեքսանդր Իպսիլանտին (1792—1828) — Տաճկաստանի դեմ 1821 թվին բռնկած հունական ապստամբության ղեկավարներից մեկը։

4) Ետերիա — հունական գաղտնի կազմակերպություն, վորի նպատակն էր Հունաստանի անկախությունը։

տերազմը առիթ եր ներկայացնում ի հաշիվ թուրքերի, գուցե և մոլդավացիների հարստանալու, — և սա ակնահայտնի եր թվում նրանց։

Խնքը Ալեքսանդր Իպսիլանտին անձնապես քաջ մարդ եր, բայց չունեւ անհրաժեշտ հատկություններն այն դերի համար, վորը նա հանձն եր առել այդպես յեռանդով ու այդպես անզգուշ։ Նա չէր կարողանում համբերալի գործել այն մարդկանց հետ, վորոնց ինքը պետք է ղեկավարեր։ Նրանք վոչ հարգանք եյին տաժում դեպի նա, վոչ ել վստահություն։ Դժբախտ մի կռվից հետո, յերբ ընկան հուշն յերիտասարդություն ավանավաճվածուն դեմքերը, Իորդակի Ուլիմբիոտին¹⁾ նրան խորհուրդ տվեց հեռանալ և ինքը բռնեց նրա փեղը։ Իպսիլանտին ձին քշեց դեպի Ավստրիայի սահմանները և այնտեղից իր անեծքն ուղարկեց մարտիկներին, անվանելով նրանց անհնազանդներ, վախկոտներ և անպիտաններ։ Այդ վախկոտները և անպիտանները մեծ մասամբ ընկան Սեկու²⁾

1) Իորդակի Ուլիմբիոտին (իսկական անունով՝ Իորդակի Ուլիմպիոտ) — հունական ապստամբության գործիչներից մեկը։

2) Սեկու — վանք Մոլդավիայի լեռներում։ Ետերիաների պարսունությունից հետո Իորդակին իր ջոկատի մնացորդներով փախվեց այս վանքում և չկամենալով անձնատուր լինել տաճիկներին, կրակ տվեց վառդի պահեստը և պայթեցրեց շենքը։

վանքի պատերի տակ կամ Պրուտ ¹⁾ գետի ափերին, կատաղաբար պաշտպանվելով տառնապատիկ ուժեղ թշնամուց:

Կիրջալին գտնվում եր Գեորգիյ Կանտակուզինի խմբում, մի մարդու, վորի մասին կարելի է կրկնել այն, ինչ ասված է Իսլսիլանտու մասին: Սկուլյանի ²⁾ մոտ տեղի ունեցած կռիվ նախորդակին Կանտակուզինը ³⁾ թուլտվութուն խնդրեց ուս հրամանատարությունից՝ մեր կարանտինը ⁴⁾ մտնելու: Ջոկատը մնաց առանց ղեկավարի, սակայն Կիրջալին, Սաֆիանոսը, Կանտագոսին և մյուսները ղեկավարի վոչ մի կարիք չեյին զգում:

Սկուլյանի կռիվը, կարծեմ, վոչ վոք չի

¹⁾ Պրուտ — Դանուբ գետի ձախ վտակը, վորով անցնում եր 1812 թ. Ռուսաստանին անցած Բեսսարաբիայի և տաճկական Մոլդավիայի սահմանը:

²⁾ Սկուլյանի — ավան Բեսսարաբիայում, Պրուտ գետի մոտ: Այս վայրը հայտնի յե 1821 թ. հունիսի 29-ի արյունահեղ ճակատամարտով. Սկուլյանի մոտերքը հույները զլխովին պարտություն կրեցին թվով բազմապատիկ գերազանց տաճկական ուժերից:

³⁾ Իսխան Գ. Ա. Կանսախուզին (ծն. 18-րդ դ. ձեռնել է 1857 թ.) — հունական ապստամբության ղեկավարներից մեկը, Պուլիսի ծանոթն եր Բիշինկում:

⁴⁾ Տաճկական Մոլդավիայի սահմանի վրա՝ ի տես Տաճկաստանում հաճախակի բռնկվող ժանտախտի համաճարակի, ուսնները կարանտին եյին սահմանել:

նկարագրել իր բովանդակ հուզիչ ճշմարտությամբ: Յերեկայեցեք՝ յոթ հարյուր հոգի առնառններ, ալբանացիներ, հույներ, բուլղարներ և ամեն տեսակ խուժան, վորոնք ռազմական արվեստի մասին վոչ մի հասկացողութուն չունեն և նահանջում են տասն և հինգ հազար թուրքական հեծելազորի առջևից: Այս ջոկատը սեղմվեց Պրուտի ափին և թշնամու դեմ դուրս հանեց յերկու շատ փոքրիկ թնդանոթներ, վորոնք գտնվել եյին հոսպոդարի ¹⁾ տան բակում և վորոնցից ժամանակ առ ժամանակ կրակելիս են յեղել անվանակոչական ճաշկերույթներին: Թուրքերը ուրախ կլինեյին կարտեչով գործելու, սակայն առանց ուս հրամանատարության թուլտվության չեյին համարձակվում. — կարտեչը անպայման կնկներ մեր ափը: Կարանտինի պետը (հիմա արդեն հանգուցյալ) քառասուն տարի զինվորական ծառայության յեջ լինելով հանդերձ իր օրումը գնդակների սուլոց չեր լսել, բայց աստված արժանացրեց լսելու: Մի քանի գնդակներ վզազցին անցան նրա ականջների մոտով: Ծերուկը սաստիկ բարկացավ և զրա համար մի լավ հայհոյեց կարանտինի մոտ կանգնած Ուստուկի հետևակ գնդի

¹⁾ Յապի — Մոլդավիայի մայրաքաղաքն եր, ուր շատում եր մոլդավական իշխանը՝ ղոսպոդար:

մայրորին Մայրը իր ինչ անելը չիմանալով վաղեց
դեպի գետը, վորի մյուս ափին դելիբաշները ¹⁾
խաղացնելով, արիաբար քշում ելին իրենց ձիերը,
և մատով սպառնաց նրանց: Այդ տեսնելով դելի-
բաշները շրջեցին իրենց ձիերի գլուխը և սրարշավ
հեռացան, իսկ նրանց յետևից՝ նաև թրքսկան
աւրող զորամասը: Մատով սպառնացող մայրորի
ազգանունն էր Պորչևսկիյ: Զգիտեմ, թե հետո
ինչ պատահեց նրան:

Մյուս ուրը սակայն թուրքերը հարձակում
գործեցին ետերխտների վրա: Զհամարձակվելով
զործ դնել վոչ կարտեշ, վոչ ել ուռմբեր, նրանք
վճռեցին՝ հակառակ իրենց սովորության գործել՝
սառը զենքով: Անողոք կռիվ էր: Յաթագաններով ²⁾
ելին մորթոտում միմյանց: Թուրքերի կողմը նկատ-
վեցին նիզակներ, վոր մինչ այդ չեղած բան
էր նրանց մոտ. այդ նիզակները ուսական ելին.
նրանց շարքերում նեկրասովցիներն ³⁾ ելին

¹⁾ Դելիբաշներ — այս անունն էին կրում պետերը
տաճկական աջն զորախմբերի, այսպես կոչված դելի-
ների, վորոնք կազմված էին ամենաընտիր քաջ մար-
տիկներից:

²⁾ Թաթաղան կամ արաղան — կեռ սուսերավոր
թուր:

³⁾ Նեկրասովցիներ — Դոնի կազակների զորա-
խումբ, վոր իր ատաման Նեկրասովի առաջնորդությամբ

կովում: Մեր թագավորի թուլյալույթյամբ ետե-
րխտները կարող ելին անցնել Պրուտ գետը և
թագնվել մեր կարանտինում: Նրանք սկսեցին անց-
նել գետը: Կանտագոնին և Սափիանոսը վերջին-
ներն ելին, վոր մնացին թուրքական ափին, Կիր-
ջալին՝ նախորդ ուր վերավորված՝ արդեն պառկած
էր կարանտինում: Սափիանոսը սպանվեց: Կան-
տագոնին՝ մի շատ հաստ մարդ, նիզակով վիրա-
վորված էր փորից: Մի ձեռքով նա բարձրացրեց
սուրը, մյուսով բռնեց թշնամու նիզակը, խորը
խրեց իրեն և այսպիսով կարողացավ թրով հասնել
իր սպանողին, վորի հետ և միասին գետին տա-
պալվեց:

Ամեն ինչ վերջացած էր: Թուրքերը հաղ-
թեցին: Մուղավիան մաքրված էր: Մոտ վեց
հարյուր առնառատներ ցրվեցին Բեսսարաբիա-
յում. թեպետ և նրանք չգիտեին, թե ինչով
պիտի ապրեն, այնուամենայնիվ նրանք յերախ-
տապարտ ելին Ռուսաստանին՝ նրա հովանա-
վորության համար: Տոնական կյանք ելին վարում,
սակայն՝ վոչ անառակ: Նրանց մշտապես կարելի
էր տեսնել կիսաթրքացած Բեսսարաբիայի սրճա-

մասնակցել էր Մազեպայի համախոհ Բուլավինի ապրս-
տամբությանը ընդդեմ Պետրոս I-ի և պարտությունից
հետո նախ անցել Կուբան և ապա՝ Տաճկաստան —
Դոբրուջա:

տներում, յերկար չիբուխները բերաններին, փոքրիկ գավաթներից թանձր սուրճ խմելիս: Նրանց նախշուն կուրտիկները և կարմիր սրաքիթ մաշիկները արդեն սկսել էին մաշվել, բայց փնջավոր սկուֆեյկաները ¹⁾ առաջվա պես թեք դրված էին գլխներին, իսկ լաթաղաններն ու ատրճառակները դեռ յերևում էին լայն գոտու տակից: Վոչ վոր չեր գանգատվում նրանցից: Զեր էլ կարելի կարծել, թե այդ խաղաղ ու խեղճ մարդիկ Մուղավիայի ամենահայտնի կլեֆտներն ²⁾ էին, ահեղ Կիրջալու ընկերները և վորնա ինքը գտնվում է նրանց մեջ:

Յասսայում նստած փաշան իմացավ այդ մասին և, լաղաղության դաշինքների հիման վրա, պահանջեց ուսս հրամանատարությունից, վոր ավազակին իրեն հանձնեն:

Վոստիկանությունն սկսեց փնտուել: Իմացան,

¹⁾ Սկուֆյա (նոր հուն.) — կնգուղիկ, փեղոյր, խաչգդակ (կրում ելին և հոգևորականները՝ արարողության ժամանակ):

²⁾ Կլեֆտներ (նոր հուն. նշանակում է ավազակներ) — այս անունով հայտնի էին հունական և արբանական պարտիզանները, վորոնք լեռներում ամրացած, հաճախակի հարձակումներ էին գործում տաճիկների վրա: Կլեֆտները գործոն մասնակցություն են ցույց տվել 1821 թ. հերոսական ապստամբությանը:

վոր Կիրջալին իսկապես գտնվում է Քիչինեում: Նրան բռնեցին մի փախստական վանականի տանը, յերեկոյան, յերբնա, յոթ ընկերների հետ, մթության մեջ նստած, ընթրում եր:

Կիրջալուն դրին պահակների հսկողության տակ: Նա չթագցրեց իսկությունը և հայտնեց, վոր Կիրջալին ինքն է: «Բայց, — ավելացրեցնա, — այն ուրից, ինչ յեա անցել եմ Պրուտի այս ափը, յեա ձեռք չեմ տվել ուրիշի ունեցածի մի մագին անգամ, չեմ նեղել և հետին գնչույին: Թուրքերի, մուղավացիների, վալախների ¹⁾ համար յես, իհարկե, ավազակ եմ, սակայն ուսուների համար — հյուր: Յերբ Սաֆիանոսը իր բոլոր կարտեչը կրակելուց հետո յեկավ մեզ մոտ՝ կարանտին, վերջին լիցքերի համար վիրավորներից հավաքելով կոճակներ, մեխեր, փոքրիկ շղթաներ և լաթաղանների գլուխներ, յես նրան տվի քսան բեշիկներ ²⁾ և մնացի առանց փողի: Աստված տեսնում է, վոր յես, Կիրջալիս, վոդորմությամբ էլի ապրում: Ել ինչ պատճառով են ուսուներն հիմա ինձ հանձնում իմ թշնամիներին»: Դրանից

¹⁾ Վալախիա — Դանուբ գետին մերձակա մի իշխանություն, վոր հիմա Ռումինիայի գավառներից մեկն է:

²⁾ Բեշիկ — տաճկական արծաթե դրամ (մոտ 35 40սլ. արժ.) — հինգ ղուրուշ:

հետո ԿիրՂալին լռեց և հանգիստ սպասեց իր վիճակի լուծմանը:

Նա յերկար չսպասեց: Իշխանությունը, վոր պարտավոր չեր ավագակներին հաշվի առնել նրանց ումանտիկական տեսակետից և համոզված լինելով, վոր փաշայի պահանջն արդարացի է, — հրամայեց ԿիրՂալուն ուղարկել Յասսի:

Խելքը գլխին և սրտացավ մի մարդ, վորն այն ժամանակ մի անհայտ յճրիտասարդ պաշտոնյա էր, իսկ հիմա՝ մեծ դիրքի տեր, ¹⁾ — վառ գույներով ինձ նկարագրեց նրա մեկնումը:

Բանտի դռանը կանգնած էր փոստային կարուցան . . . (Կարելի է՝ դուք չգիտեք, թե կարուցան ինչ է: Դա մի ցածրիկ, ձողագործ սայլակ է, վորին մինչև վերջերս էլ սովորաբար լծում էին վեց կամ յոթ քոսոտ յարու: Բեղավոր մուղավացին, վոչխարի մորթուց գդակը գլխին, հեծած ձիերից մեկը, բոպե առ բոպե բղավում էր ու շրխկացնում իր մտրակը և նրա քոսոտ յարուներն ընթանում էին բավական խոշոր վագրով: Յերբ նրանցից մեկն սկսում էր յետ ընկնել, ապա

¹⁾ Մ. Ի. Լեկս. — աստիճանավոր, Պուլկինի հետ միասին պաշտոնավարել է գեներալ Ինզովի գրասենյակում (Բիշկնև): 1832 թ. նա նշանակվեց Պետերբուրգ՝ ներքին գործոց մինիստրության դիվանի դիրեկտոր:

նա սարսափելի անեծքներով արձակում էր ձին և թողնում ճանապարհին, հոգ չտանելով նրա վիճակի մասին: Նա հավատացած էր վերադարձին գտնել նրան նույն տեղում, կանաչ տափաստանում հանգիստ արածելիս: Հաճախ էր պատահում, վոր մի կայարանից ութ ձիով դուրս չեկած ճանապարհորդը մյուս կայարանն էր հասնում մի գուլգով: Այսպես էր տասնհինգ տարի առաջ: Այժմ ուսացած Բեսարաբիայում ուսուսկան ձիասարք և ուսուսկան սայլակ են բանեցնում):

Այսպիսի մի կարուցա էր կանգնած բանտի դռանը 1821 թվի սեպտեմբեր ամսի վերջին օրերից մեկում: Զհուգ կանայք — թեքերը թողած և հողաթափերը գետնին քստքստացնելով, առնառաներն իրենց պատառոտված և գեղանկար տարագով, բարեկազմ մուղավուհիները սևաչա մանուկներ գրկած, շրջապատել էին կարուցան: Տղամարդիկ լուսթյուն եյին պահպանում, կանայք բուռն հետաքրքրությամբ ինչ վոր բանի սպասում:

Դարպասի դռները բացվեցին, և մի քանի փոստիկանական սպաներ դուրս յեկան փողոց: Նրանց հետևից յերկու զինվորներ դուրս բերին շղթայակապ ԿիրՂալուն:

Նա կլինեք յերեսուն տարեկան: Նրա թուխ գեմքի գծերը կանոնավոր եյին ու դաժան: Բարձրահասակ էր, լայնթիկունք և ընդհանրապես

յերևում եր, վոր արտասովոր ֆիզիկական ուժի տեր մարդ է: Թեք դրած գունչգուռն չալման ձածկում եր նրա գլուխը, լայն գոտին գրկել եր նրա բարակ մեջքը, հաստ կապույտ մահուդից կարած նրա դուլիմանը ¹⁾, շապկի լայն ծալքերը, վորոնք համարյա մինչև ծնկներն ելին հասնում և գեղեցիկ մաշիկները կազմում ելին նրա մնացած գարդն ու հագուստը: Նրա տեսքը հպարտ եր ու հանգիստ:

Աստիճանավորներից մեկը, կարմրադեմ մի ծերուկ, խոնացած համազգեստով, վորի վրա յերեք կոճակներ ելին կախ ընկած, անագե ակնոցներով սեղմեց դեմքի բոսորագույն ուռուցքը, վորը քթին եր փոխարինում, թուղթը բացեց և զնգզնգալով սկսեց կարդալ մոլդավական լեզվով: Ժամանակ առ ժամանակ նա գոռոզաբար աչք եր գցում շղթայակապ կիրջալուն, վորին ըստ յերեվուլթին վերաբերում եր թուղթը: Կիրջալին ուշադրութեամբ լսում եր նրան: Աստիճանավորն ավարտեց իր ընթերցումը, թուղթը ծալեց, ահավոր ձայնով գոռաց ժողովրդի վրա, հրամայելով յետ քաշվել և կարդադրեց մատեցնել կարուցան: Այն ժամանակ կիրջալին դարձավ դեպի նա և

¹⁾ Դուլիման — տաճկական լայնափեշ գգեստ: Թեքերը նեղ, կրծքին — կոճակներ, վրայից լայն գոտի:

մի քանի խոսք ամաց մոլդավական լեզվով. նրա ձայնը դողում եր, յերեսն ալալվեց. նա լացեց և զընգացնելով իր շղթաները ընկավ վոստիկանական աստիճանավորի վոտները: Վախեցած վոստիկանական աստիճանավորը յետ թռավ. զինվորները այն ե ուզում ելին կիրջալուն բարձրացնել, բայց նա ինքը վերկացավ, բարձրացրեց իր շղթաները, մի մեծ քալլ արավ դեպի կարուցան և կանչեց. հայդա: Ժանդարմը նստեց նրա կողքին, մոլդավացին շրխացրեց իր մտրակը և կարուցան սլացավ:

— Այդ ի՞նչ եր ասում ձեզ կիրջալին, — հարցրեց յերիտասարդ աստիճանավորը վոստիկանին:

— Նա (իմանում եք, պարոն) խնդրեց ինձ, — ծիծաղելով պատասխանեց վոստիկանը, — վորպեսդի յես հոգ տանեմ նրա կնոջ ու յերեխայի մասին, վորոնք ապրում են կիրխալից ¹⁾ վոչ հեռու բուլղարական մի գյուղում — նա վախենում ե, թե չլինի՝ նրանք ի՞նչ յերեսից տուժեն: Հիմար մարդիկ են, պարոն:

Յերիտասարդ աստիճանավորի պատմութունն ինձ սաստիկ հուզեց: Մեղքս յեկավ խեղճ կիրջալուն: Յերկար ժամանակ յես վոչինչ չգիտեյի:

¹⁾ Կիրխա — քաղաք Բեսսարաբիայում:

նրա վիճակի մասին: Այնուհետև միայն մի քանի տարի անց յես հանդիպեցի յերիտասարդ աստիճանավորին: Խոսեցինք անցյալի մասին:

Իսկ ինչ յեղավ ձեր բարեկամ Կիրճալին, — հարցրի յես, — չգիտե՞ք արդյոք, թե ինչ պատահեց նրան:

— Ինչպես թե չգիտեմ, — պատասխանեց նա, և պատմեց ինձ հետևյալը.

Յասսի բերելուց հետո՝ Կիրճալուն ներկայացնում են փաշային, վորը դատապարտում է նրան՝ ցից հանել: Մահապատիժը հետաձգում են մինչև ինչ-վոր տոնական հանդես: Առժամանակ նրան բանտ են դնում:

Կալանավորին հսկում են յոթ թուրքեր (հասարակ մարդիկ և հոգով նույնպիսի ավազակներ, ինչպես և Կիրճալին): Նրանք հարգում են նրան և վողջ արևելքին հատուկ ծառավով լսում նրա սքանչելի պատմությունները:

Պահակների և կալանավորի միջև ստեղծվում է սերտ կապ: Մի անգամ Կիրճալին ասում է նրանց. «Յեղբայրներ մոտ ե իմ վերջին ժամը: Վոչ վոք չի կարող խուսափել իր ճակատագրից: Շուտով յես կբաժանվեմ ձեզանից: Յես կկամեմ նախի մի վորհե բան թողնել ձեզ՝ ի հիշատակ»:

Թուրքերը սրում են ականջները:

— Յեղբայրներ, — շարունակում է Կիրճա-

լին, — սրանից յերեք տարի առաջ, յերբ յես ավազակութուն եյի անում հանդուցյալ Միխայլակիի հետ, մենք տափաստանում՝ Յասսիից վոչ հեռու թաղեցինք մի կարաս՝ լի գա բինիներով ¹⁾: Յերևում ե, վոր վոչ ինձ, վո՛չ ել նրան վիճակված չեր տիրանալ այդ գանձին: Թող այդպես լինի. վերցրեք ձեզ և հալալ փաշ-բաժին արեք ձեր մեջ:

Թուրքերը քիչ ե մնում խելքները թույնեն: Սկսում են խոսել, թե իրենք ինչպես գտնեն նվիրական տեղը: Մտածում են, մտածում և վերջը Վճռում, վոր Կիրճալին ինքը տանի իրենց:

Վրա ե հասնում գիշերը: Թուրքերը հանում են կալանավորի վոտքերի շղթաները, պարանով կապում ձեռքերը և նրան հետներն առած քաղաքից դուրս գալիս դեպի տափաստան:

Կիրճալին նրանց տանում ե միշտ մի ուղղությամբ՝ մի կուրգանից ²⁾ մյուսը: Յերկար գնում են նրանք: Վերջապես Կիրճալին կանգ ե առնում մի լաջն քարի մոտ, չափում տասներկու քալ դեպի կեսոր ³⁾, վոտը դետնով տալիս և ասում. եսն՝ դ:

¹⁾ Գալիքի — վոսկե դրամներ:

²⁾ Կուրգան — (տճկ. - բերդ) — թմբեր՝ հնադարյան գերեզմանների վրա: Հայտինի են սկյութական կուրգանները: Թուրքերի հարավում:

³⁾ «Ինչի կեսոր» — «դեպի հարավ»:



Թուրքերը գործի են անցնում: Չորս հոգին հանում են իրենց լաթաղանները և սկսում գետինը փորել: Յերեքը պահակ են կանգնում: Կիրճալին նստում է քարի վրա և սկսում դիտել նրանց աշխատանքը:

— Հը, շուտ կարծնեք, հարցնում ե նա, — փորեցիք հասա՞ք:

— Դեռ վնչ, — պատասխանում են Թուրքերը և աշխատում այնպես, վոր քրտինքը ջրի պես վազում է նրանց վրալից:

Կիրճալին սկսում է անհանգստություն ցույց տալ:

— Ա՛յ քեզ մարդիկ, — ասում ենա: — Գետին փորելն ել կարգին չեն իմանում: Ախր յես յերկու ռոպեյում կվերջացնելի գործը: Ա՛յ տղերք, ձեռքերիս կապերը քանդեցեք, լաթաղանը մի ինձ տվեք:

Թուրքերը քիչ մտածում են և սկսում խորհուրդ անել: — Ի՞նչ կա վոր (վճռում են Ն ըա՛մք) ձեռքերի կապերը կքանդենք, լաթաղանը կտանք: Ի՞նչ փնաս: Նա մենակ է, մենք յոթ հոգի: — Յեվ Թուրքերն արձակում են նրա ձեռների կապերն ու լաթաղանը տալիս:

Վերջապես Կիրճալին ազատ եր ու զինված: Ի՞նչ իմանաս թե, ինչեր նա զգաց այդ ռոպեյին . . . Նա սկսում է յեռանդուն կերպով փորել, պահակներն ոգնում են նրան . . . Հանկարծ նա իր յա-

թաղանը խրում է նրանցից մեկին և բուլատը ¹⁾ կրծքում թողնելով, նրա գոտկից դուրս է քաշում զուլգ ատրճանակները:

Մնացած վեցը, տեսնելով Կիրճալուն յերկու ատրճանակներով զինված, թողնում փախչում են:

Կիրճալին հիմա ավագակուլություն է անում Յասսիի մոտերքում: Վերջերս նա գրել եր հոսպոդարին, պահանջելով նրանից հինգ հազար լև ²⁾, սպառնալով վճարը ճիշտ չկատարելու դեպքում՝ կրակ տալ Յասսին և ձեռք գցել իրեն՝ հոսպոդարին: Հինգ հազար լևը հասցվեց նրան:

Ա՛յ թե ինչ մարդ է Կիրճալին:

¹⁾ Բուլաս — լավորակ պողպատից պատրաստած սուսեր կամ դաշույն, շեղբը ծաղկանկարներով ու մա-կադրուլթյաժը նախշած:

²⁾ Լև — Մերձդանուբյան իշխանություններում գործածվող դրամ (5 կոպ. արժ.)

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ջ Ի Յ

Պուշկինի այս վիպակը՝ թարգմ. Տիգրան Հովհան-
նիսյանի, առաջին անգամ հայերեն լույս է տեսել
«Մշակ» ռաթերթի № 99, 1899 թվին — հեղինակի
ծննդյան հարյուրամյակի առթիվ:

Տպագրության պատճառով մեր աշխատանքի հա-
մեմատությունը հիշյալ թարգմանության մեջ յերևան
բերեց մասնակի անճշտություններ, ինքնակամ լրա-
ցումներ և զուտ լեզվական հնարանություններ: Վերջին
պարագան ակնհայտնի կերպով լույս է սփռում այն
եվոլյուցիայի վրա, վոր ունեցել է մեր լեզուն մաս-
նավորապես այս չորս տասնյակ տարիների ընթացքում:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս
նոր թարգմանությունը ստուգել ենք 1834 թվին՝
Պուշկինի մահից յերեք տարի առաջ լույս տեսած
«Библиотека для чтения» հրատ. VII-րդ հատորի հետ:
Մի շարք այլ նյութեր ամփոփող այս գրքի մեջ ղե-
տեղված է նաև «Կիրճալի» վիպակի բնագիրը: Անհրա-
ժեշտ ծանոթությունները (սակավ բացառությամբ)
քաղել ենք Պուշկինի «Ընտիր արձակը» խորագրերը
կրող նորագույն մի հրատարակութունից, վորի խմբա-
գրությունը, ներածական հոդվածը և ծանոթություն-
ները պատկանում են Համաժողովրդական Պուշկինյան
Կոմիտեյի անդամ պրոֆ. Դ. Դ. Բլազոյին: (Տես՝
А. С. Пушкин, „Избранная проза“, Государственное
издательство. „Художественная литература“,
Москва, 1935 г.).



ՀՀ Ազգային գրադարան



NL0333050

30 400

529

13.122



Пушкин
Кирджали

ГИЗ

1936

ЭРИВАНЬ